

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

11. 04. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա. Ջանազյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Հ. Մկրտչյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Ն. Սարգսյանը, Վ. Դոխոյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
Ա. Չատինյանը - ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Անցյալ ժամանակաշրջանում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Խաչատրյանին, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին`

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզպետարանի և մարզային ենթակայության հիմնարկների կողմից գյուղատնտեսության նախարարությունից ստացված տնկիները բաշխելու և ծառատունկ կազմակերպելու ուղղությամբ;

2. Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին`

Պատրաստել շրջաբերական նամակ համայնքների ղեկավարներին, որպեսզի վերջիններս

ա) ներկայացնեն տեղեկատվություն ապրիլ ամսվա ընթացքում ռազմական գործողությունների հետևանքով համայնք տեղափոխված Արցախի բնակիչների մասին,

բ) ներկայացնեն տեղեկատվություն համայնքից Արցախում գտնվող կամավորականների մասին:

3. Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքների կողմից հողերը վարձակալությամբ տրամադրման և վարձավճարների գանձման ուղղությամբ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ Մ. Հովհաննիսյան
Հեռ. 0322/2- 31- 99/